





ժողովրդական մէջ մտաւ։ Չը նայելով որ այժմ այնքան ծանրարեւոյնով է վարչական գործերով՝ գրականութեամբ էլ պարապում է, ինչպէս ասում են, Յուլիոս Կեսարի պատմութիւնն է գրում գերմաներէն լեզուով, գիտէ ֆրանսերէն և անգլիերէն լեզուները։ Թէ ինչ ազդեցութիւն ունի պ. դաւաճապետը մեր գաւառում, այս փորձիկ պատմութիւնից կարելի է եզրակացնել։ Մի օր դաւաճապետը մի քանի ստորադասներով, ինքն ևս նրանց հետ հաշմով, Շամադիկի վերադառնալիս, ճանապարհին մի ոչխարի հօտ է տեսնում առանց չորանի։ Առաջ գնալով տեսնում է, որ հովիւը գլուխը քարի վրա է դրել և քնել, ձայն են տալիս և զարթեցնում հովիւին, «Այ, չորան, գործանալուց չես վախենում, որ քնում ես», հարցնում է դաւաճապետը։—«Ոչ, պատահաւորաւ է հովիւը, Աստուած կենցեղ տալ մեր նախնիներին, նրա անուամբ վախելուց գէլերն էլ մէջից դուրս են գալիս»։

Գիւղացիք անկեղծ սիրով սիրում են դաւաճապետին, օգնում են նրան, աւազակների տեղը ցոյց տալիս, բայց խնդրում են, որ ինքն անձամբ աւազակների ետեւից չը գնայ, կարող են վնասել, յարգելի Արսուրը ոչ ոքի չէ լսում։ «Վնասելիս էլ մարդ նստումով պիտի մեռնի», ասում է նա։ Բայց հարկաւոր է գործուծիւն։

Գիւղերում խօսակցութեան առարկան մագրէքի և անտառի խնդրին է, որոնց կողմից գիւղացիները մեծ նեղութեան մէջ են, մագրէքը փակելով ընկաւ անտառապահութիւնը, որից մեծ կարծնն ունի և երկրագործութիւնը։

Այս տարի ձմեռը շատ երկար եղաւ, ոչխարները շատ կոտորվեցին, խոզերի մի մասն աչնանը կոտորվեց, մի մասն էլ ձմեռը պահելուց յետոյ Մարգկային զոհեր ևս եղան Ուզուն-Փալայ և Աղա-Ղուր գիւղերում։

Մէլիք

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, ապրիլի 5-ին

Հաճեցէ՛ր երկուողիս մի փորձիկ անկիւն չընորհելու ձեր թերթի մէջ։

«Մշակի» վերջին թւերից մէկի մէջ գետնը վաճ էր Յիւրիսի մէջ իմ արած գիտական շատ համեստ աշխատանքիս մասին մի գովասանական թղթակցութիւն լայնացրէից։

Գնահատելով հանրեւծ պ. լրատուի բարի գգացումը և ցանկութիւնները, թող եւս տալիս ինձ յայտնելու, որ վերը յիշած թղթակցութիւնը մի շարք չափազանցութիւններ է բովանդակում, որոնց վրա չեմ ուզում երկարորէն կանգ առնել, որովհետեւ մարդը խնդրել զուրկ է որ և է հասարակական արժէքից։

Լ. Աթաբէգեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Հինգշաբթի, ապրիլի 10-ին, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի I կրօնական գիմնազիայի դասընթացի կայացաւ Մօսկվայի Կայսերական Նախարարական ընկերութեան Թիֆլիսի ճիւղի անդամների ընդհանուր ժողովը, նախագահութեամբ Լապտախնու ժողովը լսեց գանձապահի գեկուցումը, որից երևաց, որ ճիւղը 1902-ին ունեցել է մուտք ընդամենը 725 ռ., իսկ ծախք—104 ռ. 21 կ. և առ 1-ն յունվարի 1903 թ. մնում էր 620 ռ. 20 կ. Այդ գումարի վրա այժմ աւելացել է գանձառանգ իշխան Միխայիլ Ալեքսանդրովի նուիրած 3000 ռ.։ Անդամ Շուլց գեկուցումն արեց Լապտախ գաւառում կատարած պեղումների մասին. նա գտել է մի քանի գերեզմաններ, որոնց տակ հնագին մարմարե սեղաններ են երևացել։ Ենթադրվում է, որ դրանք հեթանոսական զոհարարութիւններից մնացած մոխրակոյտեր են։

«Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի կայսերական աշխարհագրական ընկերութիւնը որոշել է այս տարվայ ընթացքում մի մեծ արշավախումբ ուղարկել Միջագետք՝ բազմակողմանի գիտական ուսումնասիրութիւններ կատարելու համար։ Արշավախումբի ղեկավար նշանակված է Կազնակով։

«Кавказъ» լրագրում կարդում ենք. «Քաղաքը Կայսրը անցնալ մարտ ամսի 8-ին բաւերհանց հաստատել այն երկու թոշակները, որ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել էր հիմնել Պետերբուրգի կայսերական բժշկական ինստիտուտում Մեծ-Իշխանուհի Օլգա Յէօզօրովնայի անունով ի յիշատակ այն հոգացողութեան, որ ի Տէր հանգուցեալ մեծ-իշխանուհին ցոյց էր տուել Թիֆլիսում կանանց կրթութեան մասին։ Իւրաքանչիւր թոշակաւոր կը

ստանայ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնից տարեկան 420 ռուբլի»։

«Վրաց Ռեվիքա» լրագրի ասելով, Անդրկովկասեան ուսուցչական սեմինարիան Գորիքի պէտք է տեղափոխվի Թիֆլիս։ Ենթադրվում է, որ սեմինարիան զետեղելու համար, կը կառուցվի Վերայուս, Թիֆլիսի ագլակականների ուսումնարանի և վրաց հոգեւոր սեմինարիայի շինութիւնների մօտ։

Թիֆլիսեցի մի քանի առեւտրականներ, ինժեներ Կիրակոսեանի մասնակցութեամբ, կազմել են մի ընկերութիւն, որի նպատակն է էլէքտրական լոյսով լուսավորել Հաւաքարի փողոցները և էլէքտրական ոյժ և լուսավորութիւն մատակարարել Թիֆլիսի այդ թաղում գտնվող արդիւնաբերական ձեռնարկութիւններին։ Ընկերութեան գրամագուլու 80,000 ռուբլի է։ Ինժեներ Կիրակոսեան արդէն կազմել է կենտրոնական էլէքտրական կայարանի շինութեան նախագիծը։

Չինտորական միջնորդութիւնը ներկայացրել է պետական խորհրդին մի նախագիծ, որով բարեփոխութիւններ են մտցնվում արեւելեան լեզուների օֆիցերական այժմեան կուրսերի կազմակերպութեան մէջ։ Արեւելեան կուրսերը, որոնք այժմ գտնվում են արտաքին գործերի միջնորդութեան ասիական դեպարտամենտի իրաւասութեան տակ, նոր նախագիծով անցնում են գլխաւոր շտաբի ասիական մասի ձեռքը։ Դասընթացը կուրսերում կը տեւ ոչ երեք տարի, ինչպէս հիմա է, այլ չորս տարի։ Բացի սրանից թէ կուրսերի և թէ ընդունելութեան ընտելութիւնների ծրագիրը նշանաւոր չափով կընդարձակվի. կը մտցնվեն նոր առարկաներ—քաղաքացիական օֆիցերական, արեւելի պատմութիւն և մանկագական իրաւունք, Կուրսերը պէտք է նախապատրաստեն օֆիցերներին վարելու վարչական պաշտօններ արեւելքում և առհասարակ դուրս թողնեն այնպիսի անձերի, որոնք արդիւնաւոր կերպով կարողանան գործել արեւելքում, որպէս հակակշիռ անգլիական օֆիցերներին, որոնք բազմակողմանի կերպով ծանօթ են ասիական ազգերի կենքի ու սովորութիւնների հետ։

Երկրագործութեան և պետական կալուածների միջնորդութիւնը անցած մարտ ամսի 21-ին թող է տուել Դերբէնդի քաղաքային հասարակական վարչութեան հիմնել այդ քաղաքում վազապահութեան, պտղաբուծութեան ուսումնարան, երկու նախապատրաստական դասարաններով։ Միջնորդութիւնը խոստանում է նպաստ տալ իր կողմից այդ դպրոցին տարեկան 3,500 ռուբլի։ Նպաստը կը տրվի առաջին անգամ 1904 թւականի յունվար ամսում, երբ արդէն պատրաստ կը լինեն դպրոցական շինութիւնները և դպրոցի բացման համար կարեւոր միւս պարագաները։

Մեզ հաղորդում են, որ երեքշաբթի ապրիլի 15-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում, կը կայանայ ներկայացում Թիֆլիսի Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտի աշակերտներին օգնող ընկերութեան օգտին, որոնց մէջ կան շատ չքաւոր աշակերտներ, ապրող միմիայն իրանց դասերով։ Կը ներկայացնվի «Красное Солнышко» օպերէտը, մասնակցութեամբ տեղական յայտնի ոյժերի։

ԱնՍԻՔԱՍԻՔԻՑ մեզ գրում են. «Ենթերս վախճանված տ. Գայիանէ Շահպարտեանի որդիները իրանց մօր յիշատակին 50 ռուբլի նուիրեցին եկեղեցուն այն պայմանով, որ այդ գումարը յատկացնվի դէպի նոր գերեզմանատունը տանող ճանապարհը խճուղիներ և մի տեղ կամարը շինելուն։ 25 ռուբլի էլ նուիրեցին աղքատների գանձանակին ի դէպ. գերեզմանոցի ճանապարհը այնպիսի է գարնան ցեխերին ուղղակի անանցանելի է դառնում, որով ոչ միայն յուղարկաւորներն են հազար ու մի նեղութիւնների ենթարկվում, այլ և հանգուցեաների մարմիններն են շատ անհանգիստ լինում։ Մեր վաճառականների ընդհանուր գրասարկղում էլ կայ մի քանի հարիւր ռուբլի յատկացրած այդ ճանապարհի շինութեան Պէտք է այդ հարցը հերթական դարձնել և շուտով գլուխ բերել։ Չը պէտք է մոռանալ նաև, որ հին գերեզմանատունը պարսպապատած չէ և էջերի արածելու վայր է հանդիսանում Պէտք է պարսպապատել այդ տեղը և Թիֆլիսի մեծ ծառեր տնկել։ Անս մօտ 20 տարի

է, որ այդ հարցը գոյութիւն ունի, բայց մի մագի չափ անգամ առաջ չէ գնացել։ Երէցփոխ Ս. Մանուկեանի ուշադրութիւնը հրաւիրում ենք այդ հարցի վրա»։

ԿԱԶՈՒՄՆԻՑ մեզ գրում են. «Դարձեալ մի սպանութիւն կատարվեց մեզանում։ Ապրիլի 7-ին Երասիի կամուրջի վրա մի նորապսակ երիտասարդի գրգռելու ժամանակ, մի այլ թուրք երիտասարդ մօտենալով նրան՝ դաշնի հարուածով սպանեց անմեղ տեղը։ Դէպքը զանազան տեսակ են պատմում, զուտ ճշմարտութիւնը երայնաւորել չէ լինում, որովհետեւ այժմ մեզանում մասնաւորապէս սպանութիւնների վերաբերութեամբ ոչ մի ճշմարիտ խօսող չը կայ—նոյն իսկ եղբայրը իր սպանված կողք մասին տեսածը ճշմարտութեամբ չէ վկայում, դրա համար էլ կատարութիւնը չէ կարողանում գտնել և պատժել չարագործներին, ուստի օրէց օր բազմանում են չարագործները։ Միակ և դառն ճշմարտութիւնն այս է, որ անցնալ թէ ինքնապէս ուղիղ 10 զոհ տուեց Կազդուանը, իսկ ներկայ թիւ 3 ամսի ընթացքում 5 զոհ։ Եւ այդ բոլոր չարիքը անկախ ժողովրդից՝ բոլորում է միակ աղբիւրից, որ նիւթում են մի խումբ արեւելեան Այդ արդէն լուրջ դատողների համար աքսոսալ զարձած ճշմարտութիւն է, Դրանք մի ժամանակ իրանց չարագործութիւնները կտաւորում էին միայն հայերի շրջանում զուտ չաւստիական տեղեւորից զրդված, բայց գնալով իրանց ասպարէզը լայնացրին, նաև մեր զրաքի թուրքերի մէջ մտնելով... Անս այդ իսկ պատճառով հայերի և թուրքերի մէջ 25 տարուց ի վեր (ուսմութեւրական պատերազմից վերջը) եղած համերաշխութեան կապը խզվեց վերջին մի քանի ամսվայ ընթացքում. այժմ միմեանց դէմ լարված վրէժխնդրութեան են սպասում, որին զոհ գնաց նաև յիշու անմեղ երիտասարդը։ Այդ ատելութիւնը այն աստիճան սուր կերպարանք է ստացել, որ մօտ օրերումս երկու կողմից ևս թէ մեր պրիստաւի և թէ դաւաճապետի կողմից ժողով կանչվեցան ուր առաջարկվեց, խորհուրդ տրվեց վերջ տալ այժմեան ատելութեան և էլի առաջվայ պէս համերաշխ լինել։ Բայց ճիւղ արմատական միջոցների կարօտս Դեռ նամակս չէի փակել, լուր ստացվեց, որ քրդերը մի այլ երիտասարդի քիթ ու ականջներ են կտրատել ու բաց թողել»։

ՇՆՈՒ գիւղից (Բօրչալուի գաւառ) մեզ գրում են. «Մարտի վերջերում տեղի ունեցաւ դարձեալ մի մարդասպանութեան դէպք։ Մեր հարևան Արճիս գիւղացի Վ. Միսկաբեանցին, երեկոյեան, «Ճալա» կոչված ձմերանցից գիւղ վերադառնալիս, մի խումբ չարագործներ, միտնալով չըջապատելով սկսում են խեղդել և հետք բոլորովին կորցնելու մղտնով, կիսակենդան հասցնելով Դեբեաս գետի ափը, անշնչացնում են և ձգում ջուրը։ Դիակը սակայն 3 օր որոնելուց յետոյ ածողվում է գտնել նոյն գետում։ Սպանութեան չարժանիք, ինչպէս խօսվում է, եղել է հողային վէճից ծագած թշնամութիւնը, որ ունեցել են չարագործները Միսկաբեանցի հետ։ Բանտարկված են երեք հողիչ»։

ԱնՍԻՔԱՍԻՔԻՑ մեզ գրում. «Այս տարի մեր գաւառի ցածր զիւրք ունեցող գիւղերում վար ու ցանքը սկսվեց մօտաւորապէս մարտի 25-ին, երեք շաբաթ աւելի ուշ սովորական ժամանակից։ Բարձր զիւրք ունեցող գիւղերում դեռ ձիւնը նստած է»։

ԿԱԶՈՒՄՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 26-ին, այստեղի համալսարանի ակադէմիկոս Դաւիթ խճուղ, բազմաթիւ հասարակութեան, պրօֆէսորների և ուսանողների ներկայութեամբ, աստուածաբանական գիտութիւնների դոկտօր Սմիթովը մի դասախօսութիւն կարդաց «Դաստիարակի և Նիցչէ»։ Դասախօսը քրիստոնէական կրօնի առաւելութիւնները և ուղղութիւնը բացատրելուց յետոյ, չնչուցով Նիցչէի հակաքրիստոնէական ուղղութիւնը (անուանելով նրան անսօրմա), համեմատելով գերմանացի աշխարհայեցող փիլիսոփայ Նիցչէին ուսուցիչական և բոլոր Դաստիարակու հետ, եկաւ այն եզրակացութեան, որ Նիցչէն իր ուղղութեամբ հետեւել է Դաստիարակու Բազմաթիւ օրինակներ բերեց Դաստիարակու և Նիցչէի գրութեանց, համեմատելով գուտե նմանութիւն Դաստիարակ վերջում, հիմնվելով Դաստիարակ «Бр. Карамазовы» և «Преступление и наказание» հեղինակութիւնների վրա, չնչուց, թէ

Դաստիարակ լոյս աշխարհ հանելով այս գրութեանը, իր ուղղութիւնը փոխեց, նմանապէս և Նիցչէն, իբրեւ հետեւող Դաստիարակուն ժամանակին իր ուղղութիւնը կը փոխէր։ Ինչպէս Դաստիարակին հետեւողներ չունեցաւ, այնպէս էլ Նիցչէն չի ունենայ և եթէ կան էլ հետեւողներ, ժամանակի ընթացքում կը փոխեն իրանց ուղղութիւնը։ Ակադէմիայի ուսանողներն ընդունեցին դասախօսին բուռն ծափահարութիւններով։ Դասախօսութիւնը տեղի մօտ 3 ժամ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՔԱՅԱՆ ԴԵՊԵՐԸ

Տարակոյս չը կայ, որ Մակեդոնիայի և Ալբանիայի դէպքերը, ինչպէս և ուսաց հիւպատոս Շչերբինայի մահը, որ կարող է առաջ բերել մեծ բարդութիւններ, գրաւում են դեռ թիւնը։ Սակայն վերջին ժամանակ տեղի ունեցան և մի քանի այլ կարեւոր դէպքեր, որոնք ոչ նուազ կարեւորութիւն են ստանում։

Փրանսիական համարապետութեան նախագահ Լուրէի ճանապարհորդութիւնը Ալբանիայ, անգլիական թագաւոր Էդուարդ VII-ի այցելութիւնը Պորտուգալիայի և Իտալիայի թագաւորներին, Ֆրանսիական պարլամենտի մէջ տեղի ունեցած վիճարկութիւնները արտաքին քաղաքականութեան և Իրէյֆուսի գործի մասին, Բօրչոյում գումարված Ֆրանսիական սօցիալիստների V կոնգրէսը, Լեօնում կայացած երկու նշանաւոր կոնգրէսները—պատմական գիտութիւնների միջազգային կոնգրէսը և լատինո-հելլենականի տաւրի կոնգրէսը, Աերիայի ասիանագրական փոփոխութիւնները, անս վերջին երկու եօթնեակների մէջ տեղի ունեցած դէպքերը։

Լուրէի նախագահի ճանապարհորդութիւնը Ալբանիայ—նախկին աւազակների այս բնում, որ այժմ, շնորհիւ Ֆրանսիական կառավարութեան, վերածվել է մի հարուստ և ծաղկաւ երկրի—կարևորութիւն է ստանում այն պատճառով, որ Ալբիւն մինչև այսօր համարվում էր գլխաւոր կենտրոն, ուր նախօրինակները ետանդուն և աղող կոխ էին մղում համարապետութեան դէմ։ Ալբիւնը նախօրինակների և կղերականների գլխաւոր ապաստանն էր. ցեղային կոնգրէսը այնպիսի աստիճանի գրգռվել էր այդպիսով, որ համարապետական կառավարութիւնը ստիպվեց լուրջ միջոցների դիմել նախօրինակների դէմ պայքար մղելու և այժմ, որ նա արդէն լաւ հետեւանքների է հասել, նախագահի ճանապարհորդութիւնը պէտք է վերջին հարուածը տայ նախօրինակներին և լրումն տայ պայքարին։

Սակայն նախօրինակները դեռ չեն վհատում։ Նրանք ամեն ջանք գործ են դնում անուանարկել միջնորդ-նախագահ Կօմբին, որին այժմ սկսել են հարուածել, ասելով, որ նրա որդին մի միտի կաշտուղ է ստացել կրօնական մի միաբանութիւնից՝ թոյլատրութիւն ձեռք բերելու համար ի հարկէ, Կօմբի որդին անմիջապէս բողոքեց այդ դրաւարութեան դէմ և պահանջեց խիստ քննութիւն։ Չը բաւականաւալով դրանով, նախօրինակները լրագիրները ճգնում են ապացուցանել, որ եթէ Դիւրիսի գործի մասին վերաքննութիւն սկսվի, ինչպէս պահանջում է Թօրէսը, այդ վերաքննութիւնը կօնֆիկտ առաջ կը բերէ Դեբեանիայի հետ իբրեւ պատասխան այդ յարձակումներին, Թօրէս մի նոր ճառ արտասանեց Բօրչոյի Վրդ կոնգրէսում, որի բովանդակութիւնը առաջ է բերված երէկվայ արտաքին լուրերի մէջ, իսկ միջնորդ-նախագահ Կօմբի շարունակում է անշիւ կերպով իրագործել իր վճիռները կրօնական միաբանութիւնների վերաբերմամբ. նա նորերս հրատարակեց մի նոր չըջաբերական, որով արգելում է եպիսկոպոսներին թոյլատրել լուր լուրված միաբանութիւնների անդամներին եկեղեցիներում քարոզ խօսելու։ Նախօրինակները և կղերականները բաղվել են մի անստան ժայռի, յանձնել Կօմբի միջնորդութեան, որ երկու չէ կրում ոչ մի սպանալիքից, ոչ մի յարձակումներից և անընդհատ մղում է իր կռիւը։

Ներքին այդ կարեւոր դէպքերը սակայն չեն կարողանում միջնացնել մակեդոնական դէպքերի կարեւորութիւնը և թերթերով Ֆրանսիական թերթերը, ինչպէս և գերմանականները, մենք տեսնում ենք, որ եւրոպական մամուլը խիստ յոռետես դատողութիւններ է անում այն հետեւանքների մասին, որ կարող է առաջ բերել Շչերբինայի մահը։ Վիէնայում, ինչպէս հա-



դորդում է «Times»-ի թղթակիցը, ընդհանրապես կարծում են, որ եթե Ռ. Դուբոյսը լաւ դաս փողի և նպարեղէնների խանութներից բարձր տայ ալրանցներին, Ռուսաստանը ստիպւած կը լինի օրինակելի բաւարարութիւն պահանջելու Գաղաքական այն շրջաններում, ուր պատուում են ցերեկի լոյսին ևս դիմադրող չեն հաւատում Ռուսաստանի անկեղծութեան, խաւարը Պարսկաստանի բազարն է սա, որը պնդում են, որ Շչերբինայի սպանութիւնը կը ընդհանուր է և ալ քաղաքների համար: Եւստի Ռուսաստանին պատրուակ ինքնուրոյն Յանկարծ այդ միտքի ու իրարանցման մէջ կերպով գործելու Բարկանեան թերակղզում լսելի են լինում բարձրակող ձայներ, աղա՛ս: «Neues Wien. Tageb.» լրագիրը առում է, որ զակներ.

«Voss. Zeit.» նկատում է, «Շչերբինայի մահը դնում է Ռուսաստանին դէմ առ դէմ բոլորովին նոր ինչքի հետ: Մերձաւոր Արեւելքում վտանգի է ենթարկված Ռուսաստանի պատերը և հաւաքը—և ոչ միայն Ռուսաստանի Բոլոր քաղաքակրթւած պետութիւնները շահագրգռված են, որ իրանց դիպլոմատական ներկայացուցիչները անձնամիջոցի միջոցով... Ռուսաստանը բոլորովին իրաւունք ունի պահանջելու մարդասպանի գլխատումը, բայց բանն այն է, որ թիւրքացիները այնպէս էլ հեշտ չեն պատժել ալանցիկ Երկրի այսօր մահուան ոչ մի պատիժ չէ գործադրվել ալանցիկ վերաբերմամբ: Դժուար թէ սակայն սուլթանը այս անգամ կորոզանայ և ձեռնադրու համարէ խաղիկ Եւրոպային և մանաւանդ Ռուսաստանին:

Հ. Ա.

ՆԱԽԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դուռը Պարսկաստանի ամենամեծ ուխտատէր լինելից մէկն է: Այդտեղ թաղված է Ալիի կինը—Հազրաթը—Մօսուլում:

Քաղաքից մի վերստ հեռաւորութեան վրա մենք կանգ ենք առնում: Մեր դէմ ու դէմը, ճանապարհի երկու եզրերին, երկու տնակներ են բարձրանում, որոնց առջև ցցված են ձողեր, իրանց վրա կրելով մի ուրիշը, որից և կախված է մարգարէի օրագրան խօսքը—Դուրսնը: Այ կողմի տանիքի եզրին, կողք-կողքի դրված են երկու վագրերի պաճուճապատանքներ, ահաւոր ժանիքները բացած, աչքները յառած սեպած ձողերին, որոնք տարիներից ի վեր ծօծնող սրբութեան հսկումն են կրողներ: Ուղեկից ընկերներս—երկու մէյդոններ—սրբազան պարտք են համարում ցած իջնել, իրանց կրօնական ջերմեւանութեան պահանջները կատարելու: Սկսում են աղօթքի մրմունջներ, որոնք հետևում են մի քանի երկրպագութիւններ և վերջանում են իրանց զգեստների համառ աստուծոնցից մի-մի կտոր աւելացնելով այն հարիւրաւոր գոյգոյն ծուլների շարքին, որոնք քամու մի թեթիւ շարժումից թռչում են ձողերի ամբողջ երկարութեամբ:

Եւ Դուրսնի այս գաղափարն պաշտամունքի կարճատև արարողութիւնը սքանչելի առիթն է հանդիսանում ուղեկից ընկերներին՝ վերսկսելու բարեկամական սրտացաւ յորդորները, խրատները, խոստմանքից առաջարկները—որոնք ամբողջ ճանապարհին մի րօպէ անգամ չէին դադարել լսելի լինելուց—յետ դարձնելու ինձ իմ տարաբախտ հոգուս հետ, մօլոր ճանապարհից, որ տանում է ինձ ուղղակի դժոխքի յատակը: Կրօնը—այդ էր ամբողջ ճանապարհին ուղեկից ընկերներին զննադատութեան, վիճաբանութեան առարկան. և յանկարծ նրանց գլխում մի հանձնարեղ միտք է ծագում:—Հազրաթը—Մօսուլումի գերեզմանին մօտենալ մի այնպիսի սրբազան անձնադրութիւն կատարած, որպիսին կարող է լինել մի քրիստոնէայի առաջնորդած լինելը դէպի Մահիկի կրօնը:

Այդպէս է արեւելքը... այնքան յետ մնացած, այնքան խղճով արեւելքը... և այդպիսի փորձութիւններ եւ շատ կրեցի իմ ճանապարհի աստանելի երկարութեան վրա: Մի տեղ էլ մի ծեր բարի իր ցանցը փռեց իմ առջև: Ամբողջ էր օր շատախօսելով, հազար ու մի օրինակներ էր բերում թէ ինչպէս արեւելքի և արեւմտեղի միջև, հիւսիսից ու հարաւից գոնդա-գոնդ թափում են ամեն ազգերի զաւակներ, ընդգրկում են այն կրօնը՝ որ հէնց ինքը Գրիստոս աւետեց աշխարհին... յայտնի չէ թէ որտեղ...:

Մենք հանում ենք Դուռը, անցնում ենք համառուն գետը և մտնում ենք քաղաքի շուկան: Ժողովուրդը խռված է այտեղ. իրարանցում, աղմուկ է ալը չափազանց նեղ անցքի մեջ...:

—Ճանապարհ, ճանապարհ, և 15-ի չափ փայտերով գինված մարդիկ յետ են հրում ժողովուրդին: Այդ ձայները մոզական աղ-ղեցութիւն ունեն կարծես: Ամբողջ, որ մի փոքր առաջ իրար միտ էր կրծում, կուռում, ծիծաղում, հայնդում ու չողոքոքում էր, յանկարծ րօպէական մի լուծեան մէջ է խորանգում: Նստածները վեր են կենում, կանգնածները դէպի յետ են գնում, կուռ գալիս, պատերին սեղմվում... Փառաշները առաջ են անցնում, նրանք չըրպապտել են մի ձիու, որի վրա, հպարտ գոհունակութեան ժպիտը շուրթերին նստած է մէկը՝ մի երջանիկ, մի բախտաւոր, որ երկնքից՝ ամբողջ հալածելու մենաշնորհ ունի... Նա երիտասարդ է, 30-ից հազիւ անց լինի, դեր իրանով, գլխի սև ապարջը աւելի ևս պատկառանք է տալիս ծուռ... մարգարէի որդի է նա...:

—Սալամ, սալամ... մրմունջում են հարիւրաւոր շրթերները, խոնարհվում է գլուխների ծովը և մարդիկ աւելի ևս յետ են գնում, կուռ գալիս, որպէս զի անցքը աւելի լայն լինի և աղան աղատ անցնի...:

Մի քանի րօպէ ևս... և վերսկսվում է ընդհատված ժողովը, աղմուկը, իրարանցումը:

—Դա Մուլեմովի բաշին է, պատասխանում է մեր հարցին մի պարսիկ, այստեղի բոլոր սրբութիւններին, մզկիթներին և նրանց ստացուածքի տէր—խնամակալը:

Եւ ըստ երևոյթին հիացած, նա շարունակում է.

—Ոսկին ջրի նման է վազում նրա տան մէջ, Իրանի չորս ծայրերից, ամեն օր, ջրի-ներին բարձած նուէրներ են թափվում նրա դուռը, ուխտաւորների բերած զոհերը, ընծաները ևս նրա սեփականութիւնն են կազմում—և այդ ուխտաւորները հազարաւոր են: Պատահում է, որ մի հարուստ մեծաւոր է, նրա մարմինը մզկիթի բակում մեծափուլ համար աղայի կամքից կախումն ունի հատուցման քանակը, 100—200—300, պատահում է և 400 թուման է պահանջում: Ուխտաւորին քաղաքի չըրկակցութեամբ ունի կալուածներ, գիւղեր, որոնց թիւը 100-ից անց է, որոնք ևս նրա խնամքին են յանձնված և այդ խնամակալութիւնը ժառանգաբար անցնում է որդոց որդի: Նրա գետնափոր ամբարներում իրանի 15 գահակալների կտրած ոսկի դրամներով լի երկաթեայ մուղեկներ կան դարպասում... և աղան իսկի ուշադրութեան էլ չէ արժանացնում նրանց...:

Մենք առաջ ենք անցնում և դուրս ենք գալիս քաղաքից: Արեւ մօտ է մայր մտնելու, նրա շողերի տակ Հազրաթ Մօսուլումի ոսկեզօծ զմեռելի փայլելով է: Տխուր մտքեր են պաշարել ինձ.

—Եւ այդ ամբու հարստութիւնից ինչ է օգտվում ժողովուրդը, կայ ամբողջ քաղաքում մի հատ գաղթող, մի հիւանդանոց, մի բժիշկ... Եւ առիթ եմ ունենում այս հարցերը տալու մի ուրիշ պարսկի և բացասական պատասխան եմ ստանում.

—Եւ ոչ մէկը...

—Ինչո՞ւ ժողովուրդը...

Բայց անա կրկին իրարանցում է, մեր առջևից մի խումբ է գալիս: Երևոյթից յայտնի է գիւղացիներ են, ոտաւորիկ, սեւացած ու ալարայակված դէմքերով, կորացած մէջքերով: Բայց և այնպէս գոհութեան մի ժպիտ խաղում է նրանց դէմքի կնճիռների մէջ: Ինչո՞ւ նրանք բախտաւոր են զգում իրանց, որ վերջապէս այսքան տարիների տանջանքից, չարչարանքից, զրկումից յետոյ, կարողացել են մի բան յետ գցել և արժանանալ սուրբ հողերը համարները: Նրանք գնում են ու տանում իրանց տարիների սև քրտիքի նման տակված կենսականութեան արդիւնքը—մի քանի թումաններ—աւելացնելու աղայի քաղաքում, առաջապէս հարստութիւնը...

—Ինչո՞ւ ժողովուրդը, տգէտ ժողովուրդը...

Կ. Տիմոն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Նորբա Սօֆիայում կայացաւ մի հայրենասիրական բանկէտ ի պատիւ Լոնդոնի «Daily

News» լրագրի թղթակցի Բանկէտի ժամանակ արտասանվեցին ճառեր, որոնց մէջ այն միտքն արտայայտվեց, թէ Մակեդոնիան լրված է անմեղիք և միայն Անգլիան կարեկցութիւն է ցոյց տալիս նրան: Հաղորդելով այս լուրը, «НОВОСТИ» լրագիրը հերքում է այդ մտքի ճշտութիւնը: Նա առում է, որ Անգլիան, ընդհանրապէս, ոչ թէ կարեկցութիւն է ցոյց տալիս Մակեդոնիային, այլ վերաբերվել է մակեդոնական հարցին երկմիտ կերպով: Մի կողմից միջնորդ-նախագահ Բալֆուրը յայտնում է պարլամենտում, որ մակեդոնական հարցի մէջ չափազորգութեամբ են միայն Աւստրիան և Ռուսաստանը և Բրիտանական կառավարութիւնը կարող է միայն խրախուսել նրանց ջանքերը, իսկ միւս կողմից արտաքին գործերի մինիստրութիւնը կարանքով բերանով մտածում է ներգործական միջամտութիւն գործել մակեդոնական գործերում: Այս բոլորից մի բան միայն պարզվում է, որ մակեդոնական հարցը չէ լուծվում զինուորապետ մեծ պետութիւնների մէջ կատարել համաձայնութիւն չը լինելու պատճառով և հէնց այդ հանգամանքից դարձնալ ճարպիկ կերպով օգտվում է սուլթանը, ինչպէս օգտվեց և հայոց հարցի մէջ:

—Բեկդադից հեռագրում են «Neue Freie Presse» լրագրին, որ Ռուսաստանը պահանջում է Թիւրքիայից 1,200,000 Ֆրանկ վարձատրութիւն յօդուտ ապանված Շչերբինայի ընտանիքի և կառուցումն մի մատուցի սպանութեան տեղում: Բացի դրանից Ռուսաստանը պահանջում է ուղարկել Հին-Սեբիա 20,000 անասորիական զօրք, որ մշտապէս այդտեղ մնայ և կարգ պահպանել ալանացիների մէջ:

—Բաղդադի երկաթուղու շինութեան գործը մի նոր կարևորութիւն ստացաւ նրանով, որ Անգլիան, երկու տասնամեկից յետոյ, որոշեց վերջապէս մասնակցել այդ գործին և այսպէս կոչված մի նոր երեքպետեան դաշնակցութիւն կազմելու: Անգլիայի այդ որոշումը ահագին յոգեմեծ է տալիս իրեն լամպի քաղաքական աշխուժում: Ինչպէս յայտնի է, այդ հարցում Անգլիան շարունակում պէտք է միանայ Կ. Պօլսը պարսից ծոցի հետ, բայց նրա իրաւործումը բաւական դժուար էր, որովհետև Գերմանիայում, չը նայելով բոլոր ջանքերին, կարողացել էին գտնել հարկաւոր դրամաւորի միայն 20 տոկոսը, 40 տոկոսը տուել են Ֆրանսիայի դրամաւորները, իսկ 40 տոկոսը տեղացի էր միտում: Արդ, Թիւրքիայի գտնել այդ 40 տոկոսը Ռուսաստանը ինչամարտ է վերաբերվում այդ ձեռնարկութեան, Միացեալ-Նահանգները նոյնպէս անտարբեր են վերաբերվում, ուրեմն միակ յոյսը միտում էր Անգլիայի վրա, որ կարող էր տալ դրամաւորի միացող 40 տոկոսը: Սկզբում, անգլիացիները նոյնպէս թշնամաբար վերաբերվեցին և նոյն իսկ պահանջողական «Times» լրագիրը յայտնեց, որ Անգլիան ոչ մի օգուտ չունի գրգռել Ռուսաստանը իր դէմ և նրան աւելի ձեռնադրել է իր սեփական միջոցներով ապանովել իր առևտուրը Պարսից ծոռում, քան մասնակցել մի ձեռնարկութեան, որի օգուտները կասկածելի են: Սակայն այժմ, երբ անգլիական կառավարութիւնը որոշեց մասնակցել, անգլիացիները շատ գոհ են և երեք պետութիւնների—Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի—մէջ կայացած համաձայնութիւնը Բաղդադի երկաթուղու շինութեան մասին այնքան գրաւել է անգլիացիների ուշադրութիւնը, որ նոյն իսկ մակեդոնական հարցը անուշադրութեան է մատնվել: Անգլիացիների ուրախութիւնը հասկանալի է, նրանք վաղուց նախանձով էին նայում Գերմանիայի Փոքր-Ասիայում ունեցած աղողութիւնների վրա: Բացի դրանից Բաղդադի երկաթուղին չինուտ առաջին միտքը յղացել էին անգլիացիները դեռ 1837-ին, ուստի այդ երկաթուղու ծրագրի իրագործումը գերմանացիների ձեռքով, առանց Անգլիայի մասնակցութիւն, աստիճան գրգռում էր անգլիական ինքնահարկութիւնը: Եւ այդպէս Գերմանիան, վերջապէս, հարաւորութիւն ստացաւ իրագործել իր հսկայական ձեռնարկութիւնը, որ ոչ միայն Փոքր-Ասիան, այլ և Պարսկաստանը պէտք է առաջ բերում սուլթանական պարսկական:

—«Berl. Tageb.» լրագրի աւելով, սուլթան Աբդուլ-Համիդը, երկու է կրում, որ Շչերբինայի սպանութիւնը կը վառթարացնէ Ռուսաստանի յարաբերութիւնները Թիւրքիայի հետ: Ինչպէս առում են, Ձիւնովի՛կ հասկացնել է տուել սուլթանին, որ Ռուսաստանի համարութիւնը հատել է և մօտ ապագայում Ռուսաստանը առանձին պահանջներ կանէ Թիւրքիայից: Այդ ամենը աստիճան յուզմունք է առաջ բերում սուլթանական պարսկական:

—«Köln. Zeit.» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է, որ Կ. Պօլսում աստիճան գրգռում է տիրում բողոքների դէմ: Չարագուշակ լուրեր են տարածվում, հաւաստիացնում են, որ պատրաստվում է Բարթոլոմէոսեան գիշերի պէս մի բան:

ՄԵՆԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՏ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

10 ապրիլի

ՆԻՒ-ԵՐԿԻ: Երէկ Գուսակիլում երկու անգամ ստորերկրայ հարկած գրգռվեց:

ՊԼԻՆԱ ՊԻՆԵ ՊԻՆԵՐԻՆ Կրամայված է սկսել չինական ֆինանսների վերակազմութիւնը, ամբողջ պետութեան մէջ սահմանելով միառեսակ դրամ:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ: Անգլիական Թագուհին մեկնեց դէպի Լոնդոն:

ԱՂԵՆ: Անգլիական 10 սպաներ և տեղական զօրքից 180 հոգի սպանված են Սոմալիլանդում: Զօրախումբը բաղկացած էր 220 հոգուց: Մանրամասնութիւններ չը կան:

ՄՕՍԿՎԱ: Թագաւոր Թագածաւանդը այցելեց և մանրամասն կերպով զննեց Տրեսնա-կովսկու պատկերների գալլերեան, Բոսանովների տունը և Զնամենսկի արական վանքը, որտեղ գիմաւորեց Տօլիյ վարդապետը միաբանութեան հետ միասին:

ՉԵՐՆԻԳՕՎ: Շչերբինայի մարմինը Զերնիզով կը հասնի շաբաթ օրը: Սպասվում են զանազան պատգամաւորութիւններ: Քաղաքը պատրաստվում է ընդունելութեան համար:

ԲԷՂԳՐԱԴ: Լրագիրները հրատարակեցին ուսաց դեպքանի չնորակաւական նախկը, որով նա Թագաւոր Կայսեր յանձնարարութեամբ, յայտնում է բարձրագոյն չնորակաւութիւն սերբիական ժուրնալիստների միութեանը՝ Միաբողիցայում սպանված ուսաց հիւպատոսի մահվան առիթով արտայայտած ցաւակցութեան համար:

ՄՕՍԿՎԱ: Ապրիլի 2-ին Նորին Կայսերական Մեծութիւնները ներկայ եղան «Малый театр»-ի ներկայացմանը՝ Թագաւոր Թագածաւանդի, Մեծ Իշխանի և Մեծ Իշխանուհու հետ:

ՆՕՎՕԶԵՐԿԱՍԿ: Երէկ ժողովրդական ծառայողի քննարկում Կիւսկի ինքնուրույն զօրքի գլխավորը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Քաղաքական մարմին և բարձր հասարակութեան ներկայացուցիչներին, էքսպոնենտներին և Պետերբուրգի Լուսնակարական ընկերութեան անդամների ներկայութեամբ բացվեց միջազգային լուսնակարական ցուցահանդէսը: Ծուլահանդէսը աչքի ընկնող հետաքրքրութիւն է ներկայացնում:

Թագուհի Կայսրուհի Մարիա Մեծօրօշման Կօպէնհագենից ճանապարհ ընկաւ դէպի Ռուսաստան:

ՍՕՅԻՆ: Ապրիլի 11-ին արտակարգ գնացքով գնալու են այն անձինք, որոնք հրաւիրված են ներկայ լինելու Պիւմայի մօտ ընկած գոհերի յիշատակին չինական մատուռի հիմքը դնելուն: Բացակայող իշխանի փոխարինում է գնեւոր Նիկոլայեւը: Հիմքը դնել տեղի կունենայ շաբաթ օրը:

Հանգուցեալ Սալիկի հրոսակախումբը ձեռնաւարկեց Պետրիկ գայմազմին և 25 թիւք գնեւորներին, որոնց բոլորին զինաթափ արեց և ապա արձակեց: Լրագիրները տպագրում են մանրամասնութիւններ մեծ հրոսակախմբերի ընդհարումների մասին:

ՄՕՍԿՎԱ: Այսօր նահանգական և գաւառական ազնւականութեան պարագլուխները և պատգամաւորները, թուով 27 հոգի, չնորհա-կալութիւն յայտնեցին Նորին Մեծութեանը՝ Մօսկվայի ազնւականութեան զատկական հաղ-կերով ընդունելու համար: Հնգուցեւորութեան ժամանակ Սալիկեւիցի ցեղի վերջին ներկա-յացուցիչ իսկական խորհրդական Սալիկեւ թագաւոր Կայսրին յանձնեց ս. Նիկողայոս Հրաչագործի հին պատկերը, որ պատկանում էր Սալիկեւիցի ցեղակից Իօակիմ պատրիարքին:

ՄՕՍԿՎԱ, Հինգալթի օրը Նորին Մեծութիւնները, Նորին Բարձրութեան Թագածաւանդը, Մեծ Իշխանները և Մեծ Իշխանուհիները ուղեորվեցին Ալեքսեւսկի վանքը: Ժողովուրդը ցնձագին ցոյցեր արեց: Վաղի զը-նունը Նորին Մեծութիւններին դիմաւորեց մայրապետ Սերգեյան վանականը: Բաւարացիները միայն և երգեցողութեամբ առաջնորդեցին մինչև զինաւոր տաճարը: Այդտեղ դիմաւորեց վանայր Աֆանսկին: Հին խաչով և հողեւորականութեան հետ Նորին Մեծութիւնները և Նորին Բարձրութիւնները զննեցին հին խաչկալը, աղօթք արին Աստուածամօր հրա-չագործ պատկերի առաջ, այցելեցին մայրապետին և Իրանց անունները գրեցին Բարձրագոյն այցելութիւնները արձանագրելու համար նա-նակված յատուկ գրքում: Վաղի գերեզմանո-ցում Նորին Մեծութիւնները այցելութիւն տուին Կատիովի գերեզմանին: Նորին Մեծութիւնները և Նորին Բարձրութիւնները վաղից զննեցին դէպի մօտակայ ապաւտարանը երե-խանների համար:



Электротпечатная Груз. Изд. Т-ва, Б.-Вашевская ул